

կանաց ոմանց. և ես մեծայրոյս մեծափափաք կը սպասեմ Նոցա՝ ցեօմ առանձին հրա-
աբարկութեան գործոյս, որ յետ ոչ բազմաց պիտի սկսի. մանաւանդ թէ գործս լի-
նելով գլխովին աղքատուէր, աղքայնոց կողմանէ ևս գրասուր ձեռնտուութիւնք և նը
պատեք յուսամ թէ չեն զլացուիր՝ զայս յաջող կերպով աւարտելու և այլոց սկիզբն
առնելու համար:

Առաջիկայ գործոյս մէջ դարունակեալ և ընդարձակօրէն բարգաւաճեալ և լուծուած
առանձին գէպս և գեօւարտակնձիռն խնդիրներն զլեակարգութեանց բովանդակու-
թեանը մէջ պիտի տեսնեն ընթերցողք. իսկ ընդհանուրքն, որոնց վրայ իբրև յաշ-
ուանցքի պիտի հոլովի և յառաջէ քննադատութիւնս՝ են. Ա. Ագաթանգեղոսի իրա-
կան գոյութեան կամ ոչ գոյութեան խնդիրն, այսինքն է, Ագաթանգեղոսը անուն
իցէ՛ լեալ պատմական և փամանակակից գրիչ Տրդատայ և Գրիգորի պատմութեան,
եթէ ընդհակառակն իմանալի է: Բ. Ագաթանգեղեայ պատմութիւնն ամբողջապէս
իցէ՛ արդեօք գործ քարտուղարին Տրդատայ գրեալ ՚ի սկզբն Գ. գարու, թէ ընդհա-
կառակն յայլ և այլ հեղինակութեանց և գործոց կազմակերպուած խմբագրութիւն
մի: Գ. Ստուգիւ հայերէն լեզուով գրեցաւ այդ երկասիրութիւնը, ինչպէս կարծեն
Գուտշմիգ և այլք ոմանք, թէ ընդհակառակն յունարէն: Դ. Այժմեան յունարէն
Ագաթանգեղոսն իցէ՛ արդեօք բնագիր հայերէնի, թէ ընդհակառակն սորա վրայէն
յետոյ ուրեմն եղած թարգմանութիւն: Ե. Լուսաւորչայ կարծեցեալ ընդարձակ
վարդապետութիւնը՝ ստուգիւ հարազատ իցէ, թէ գործ յեանագունի ուրումն
ժամանակաւ:

Ամենուն քաջածանօթ է այժմ, թէ Ագաթանգեղեայ գիրքն յերից մասանց կը
բազկանայ, այսինքն է. առաջինը կը պարունակէ Տրդատայ, Գրիգորի և սրբոց
Հռիփսիմեանց նահապետութեան պատմութիւնը. երկրորդը՝ Լուսաւորչայ կարծե-
ցեալ վարդապետութիւնն. հուսկ երրորդը՝ Հայաստանի գործի պատմութիւնը:
Թող ներեն ինձ առ այժմ Հայսց լուսաւորութեան հօր հետ՝ նորա ջերմ սրբիքը
փոխադրելու այդ միջին կամ երկրորդ մասն՝ ի վերջ կոյս երրորդին, խոստանալով
որ գարծեալ կարելի է զետեղել իւր տեղ. նորա հեղինակութեան հետ ի միասին՝ բար-
գաւաճող և օրհնեալ ձեռքն և բերանն ևս մասննախը ընել և անգ ներմուծուելու
բուն պատճառն:

Հ. ԲԱՐՈՅՆ ԱՐԳՈՍԵԱՆ

Խ Ր Ա Տ Ք Խ Ի Կ Ա Ր Ի Ի

Որդեակ, թէ բարձր է շեմ ասն քո երկայն սրպէս կանգունն եօթն, յորժամ
մասնիցեա՝ խոնարհչեց զգլուխն քո:

Որդեակ, մի առնուլ մեծ կշռով և սալ փոքրով, և ասես թէ շահեցայ. զի ոչ տայ
Աստուած, այլ բարկացիք և գու սովամահ կորնչիս:

Որդեակ, թէ ընկերն քո հիւանդանայ՝ մի ասեր թէ քնն ասնիմ նմա, այլ Երթ
ոտիւքք և տես աչօք. այն լաւ է նմա քան զհաղարս ոսկոյ և արծաթոյ:

